

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

_____2018 ԹՎԱԿԱՆ N _ Ա

ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող, ՀՀ կրթության տեսչական մարմնին ամրացված, Կրթության և գիտության նախարարության հաշվեկշռում հաշվառված տրանսպորտային միջոցը /հավելված 1/ հետ վերցնել և ամրացնել Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին՝ հետագայում օտարման նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող, Կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեին ամրացված տրանսպորտային միջոցը /հավելված 2/ հետ վերցնել և ամրացնել ՀՀ կրթության տեսչական մարմնին:

3. Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝

1) երկշաբաթյա ժամկետում ՀՀ կրթության տեսչական մարմնի հետ համատեղ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել սույն որոշման հավելված 1-ում նշված ավտոմեքենայի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը:

2) սույն որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետում նշված աշխատանքների ավարտից հետո երկշաբաթյա ժամկետում ապահովել սույն որոշման հավելված 1-ում նշված ավտոմեքենայի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվառումը՝ դրա հետ կապված ծախսերն իրականացնելով ՀՀ կրթության տեսչական մարմնի միջոցների հաշվին:

4. ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավարին՝

1) երկշաբաթյա ժամկետում Գիտության կոմիտեի հետ համատեղ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել սույն որոշման հավելված 2-ում նշված ավտոմեքենայի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը:

2) սույն որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետում նշված աշխատանքների ավարտից հետո երկշաբաթյա ժամկետում ապահովել սույն որոշման հավելված 2-ում նշված ավտոմեքենայի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվառումը՝ դրա հետ կապված ծախսերն իրականացնելով ՀՀ կրթության տեսչական մարմնի միջոցների հաշվին:

ՑԱՆԿ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ԱՄՐԱՑՎՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ

N/ N ը/կ	Մակնիշը, նույնականացման համարը	Պետական համարանիշ ը	Թողարկման տարեթիվը	Ձեռքբերման տարեթիվը	Սկզբնակ ան արժեքը (ՀՀ դրամ)	հաշվեկշռա յին արժեքը /վերագնահ ատված/ (ՀՀ դրամ)
Կրթության տեսչական մարմին						
1	Նիսան Մաքսիմա, JN1CA31C84T732999	250LL60	2004	2011	5387865, 16	5414804

ՑԱՆԿ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ ԱՄՐԱՑՎՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ

N/N ը/կ	Մակնիշը, նույնականացման համար	Պետական համարանիշը	Թողարկման տարեթիվը	Սկզբնական արժեքը (ՀՀ դրամ)	Հաշվեկշռային արժեքը (ՀՀ դրամ)
Գիտության կոմիտե					
1	TOYOTA COROLLA NMTBTOJE50R002252	707LL60	2013	8375000	4355000

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Գույք հետ վերցնելու և ամրացնելու մասին»

Կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

Անհրաժեշտությունը

Սույն նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կրթության տեսչական մարմնին ամրացված տրանսպորտային միջոցի շահագործման հետագա աննպատակահարմարության և համեմատաբար նոր, քիչ ծախսատար տրանսպորտային միջոցի տրամադրման պահանջով:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

ՀՀ կրթության տեսչական մարմնին ամրացված 2004թ. արտադրության, «Նիսան-Մաքսիմա» մակնիշի 250 LL 60 պետհամարանիշով ավտոմեքենայի շարժիչը 3լ աշխատանքային ծավալով է և մաշվածությունից ելնելով վերջինիս շահագործումն ու սպասարկումը բավականին ծախսատար է ու դարձել է ոչ նպատակահարմար:

ՀՀ գիտության կոմիտեին ամրացված համեմատաբար նոր ծառայողական երեք ավտոմեքենայից երկուսը/այդ թվում հավելված 1-ում նշված՝ 2013թ. արտադրության, շարժիչը՝ 1.3լ աշխատանքային ծավալով TOYATA COROLLA ավտոմեքենան/ համաձայն ՀՀ կառավարության 09.08.2018թ. հ.881-Ն որոշման կրճատվել են:

Կարգավորման նպատակը

Սույն նախագծի ընդունմամբ կկարգավորվի 2004թ. արտադրության, «Նիսան-Մաքսիմա» մակնիշի ավտոմեքենայի սահմանված կարգով հանձնումը Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի տնօրինությանը՝ հետագայում սահմանված կարգով օտարելու նպատակով և ՀՀ կրթության տեսչական մարմնին համեմատաբար նոր, քիչ ծախսատար ծառայողական ավտոմեքենայի ամրացումն, ինչը սպասարկման առումով չի պահանջի լրացուցիչ ծախսեր և կապահովվի ՀՀ կրթության տեսչական մարմնի բնականոն գործունեությունը:

ՏԵՂԵԿԱՆՔ

Կառավարության «Գույք հետ վերցնելու և ամրացնելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացման կամ նվազեցման մասին

Կառավարության «Գույք հետ վերցնելու և ամրացնելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի սպասվում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԱՍԻՆ» ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առարկության, առաջարկության հեղինակ, գրության ստացման ամսաթիվ, գրության համար	Առարկության, առաջարկության բովանդակություն	Եզրակացություն	Կատարված փոփոխություններ
1	2	3	4
1.Ֆինանսների նախարարություն 29.10.2018թ. հ. 01/8-2/19565-18	Առաջարկություններ և առարկություններ չկան:		

<p>2.Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտե 27.10.2018թ. հ. 01/22.12/6223 -18</p>	<p>Առաջարկվում է.</p> <p>1. նախագծի 1-ին կետում «համաձայն հավելված 1-ի» բառերից հետո լրացնել «հետագայում օտարելու նպատակով բառերը»,</p> <p>2. հետագա անճշտություններից խուսափելու նպատակով, լրացնել նախագծի հավելվածների ցանկերում ներառված տրանսպորտային միջոցների նույնացման համարները,</p> <p>3. նախագծի 3-րդ կետի 2)-րդ ենթակետը խմբագրել՝ սահմանելով, որ նախագծի N1 հավելվածում նշված տրանսպորտային միջոցի պետական հաշվառման հետ կապված ծախսերը ենթակա են իրականացման «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի կամ նախարարության կրթության տեսչական մարմնի միջոցների հաշվին,</p> <p>4.հաշվի առնելով, որ նախագծով նախատեսվում է հետ վերցնել և ամրացնել երկու միավոր տրանսպորտային միջոց, անհրաժեշտ է նախագծի տեղեկանք-հիմնավորումը խմբագրել՝ նշելով նաև տեղեկատվություն 2-րդ տրանսպորտային միջոցի վերաբերյալ:</p>	<p>1.Ընդունվել է:</p> <p>2.Ընդունվել է:</p> <p>3.Ընդունվել է մասնակի և կատարվել է լրացում՝ տվյալ ավտոմեքենայի և հաշվառման, և հետագայում օտարման նպատակով կատարվելիք ծախսերի փոխհատուցման նպատակով:</p> <p>4.Ընդունվել է:</p>	<p>1.Նախագծի 1-ին կետում կատարվել է լրացում:</p> <p>2.Նախագծի հավելվածներում կատարվել են լրացումներ:</p> <p>3.Նախագծի 3-րդ կետի 2-րդ ենթակետում կատարվել է լրացում:</p> <p>4.Նախագծի տեղեկանք-հիմնավորումը խմբագրվել է:</p>
--	--	--	---

<p>3. Արդարադատության նախարարություն 14.11.2018թ. հ. 02/14/627802-18</p>	<p>Առաջարկվում է. 1. Որոշման նախագծի վերնագիրն անհրաժեշտ է խմբագրել՝ նկատի ունենալով, որ «մասին», բառը կրկնվում է: 2. Նախագծի նախաբանում անհրաժեշտ է խմբագրել նշված օրենքի վերնագիրը, մասնավորապես «մասին», բառից առաջ լրացնել «կարգավորման», բառը:</p>	<p>1. Ընդունվել է: 2. Ընդունվել է:</p>	<p>1. Խմբագրվել է 2. Խմբագրվել է</p>
<p>4. Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն 20.11.2018թ. հ.01/9448-18</p>	<p>Առաջարկվում է. նախագծի 3-րդ կետի 2)-րդ ենթակետը խմբագրել՝ սահմանելով, որ նախագծի N1 հավելվածում նշված տրանսպորտային միջոցի պետական հաշվառման հետ կապված ծախսերը ենթակա են իրականացման «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի կամ նախարարության կրթության տեսչական մարմնի միջոցների հաշվին:</p>	<p>Ընդունվել է:</p>	<p>նախագծի 3-րդ կետի 2)-րդ ենթակետը խմբագրվել է</p>